

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
1.	Մասնագիտության անվանումը	Էլեկտրատեխնիկ-մեխանիկ՝ երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման
2.	Ղերը	Էլեկտրաքարշի վերանորոգում, սպասարկում և շահագործում
3.	Խնդիրները	Էլեկտրաքարշի անսարքությունների հայտնաբերում, տեխնիկական սպասարկման, շահագործման ու նորոգման կազմակերպում, աշխատանքային գործընթացների իրականացման ժամանակ անվտանգության պահպանում:
4.	Աշխատանքային գործընթացները	
4.1.	Աշխատանքային գործընթաց 1.	Էլեկտրաքարշի անսարքությունների հայտնաբերում
4.2.	Աշխատանքային գործընթաց 2.	Էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկում
4.3.	Աշխատանքային գործընթաց 3.	Էլեկտրաքարշի նորոգում
4.4.	Աշխատանքային գործընթաց 4.	Էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում
4.5	Աշխատանքային գործընթաց 5.	Ընթացքի ժամանակ գնացքի անսարքության հայտնաբերում
5.	Աշխատողին ներկայացվող պահանջները	
5.1	Լեզուների իմացություն	<ul style="list-style-type: none"> <li>• Հայերեն՝ գերազանց</li> <li>• Ռուսերեն՝ C1</li> <li>• Երկրորդ օտար լեզու՝ B1</li> </ul>
5.2	Համակարգչի իմացություն	<ul style="list-style-type: none"> <li>• MS Word՝ գերազանց</li> <li>• MS Excel՝ լավ</li> <li>• MS PowerPoint՝ բավարար</li> <li>• Internet Explorer՝ լավ</li> </ul>
5.3	Մասնագիտական գիտելիքներ	<p><b>Պետք է իմանա՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դեպո ժամանած էլեկտրաքարշի տեխնիկական գնման և անսարքությունների հայտնաբերման կարգը, վերանորոգման տեսակները և դեպոյից մեկնող էլեկտրաքարշի սպասարկման կարգը,</li> <li>• էլեկտրաքարշի անսարքությունների նորոգման տեխնոլոգիական գործընթացը,</li> <li>• արգելակման սարքերի փորձարկման տեսակները,</li> <li>• էլեկտրաքարշի էլեկտրասարքավորումների անխափան աշխատանքի սկզբունքները,</li> <li>• համապատասխան փաստաթղթային գրառումներ կատարելու և հաշվետվություններ ներկայացնելու կարգը,</li> <li>• լոկոմոտիվային տնտեսության առանձին տեղամասերի գործառույթները և աշխատողների պարտականությունները,</li> <li>• վերանորոգված էլեկտրաքարշի որակավորման չափանիշները և շահագործման թույլտվության կարգը,</li> </ul>

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
		<ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>• կայարան ժամանած գնացքի ընդունման և սահմանափակման կարգը,</li> <li>• էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման կարգը,</li> <li>• էլեկտրաքարշի դետալների և հանգույցների մաշվածության աստիճանի որոշման եղանակները,</li> <li>• էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման կանոնները,</li> <li>• էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը,</li> <li>• էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը գնացքի կազմում:</li> </ul>
5.4	Մասնագիտական կարողություններ	<p><b>Պետք է կարողանա՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կատարել էլեկտրաքարշի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողության կարգը,</li> <li>• կատարել անսարքությունների չափումներ և որոշել պահանջվող վերանորոգման աստիճանը,</li> <li>• հայտնաբերել անսարքությունները, վերանորոգման տեսակները և սպասարկել դեպոյից մեկնող էլեկտրաքարշը,</li> <li>• կազմակերպել և հսկել էլեկտրաքարշի անսարքությունների վերանորոգման աշխատանքները,</li> <li>• կատարել արգելակման սարքերի փորձարկումներ,</li> <li>• կազմակերպել էլեկտրաքարշի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</li> <li>• իրականացնել հսկողություն տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքի նկատմամբ,</li> <li>• կազմակերպել էլեկտրաքարշի տեխնիկական շահագործումը,</li> <li>• իրականացնել գնացքի արգելակման համակարգերի փորձարկման վերահսկողությունը,</li> <li>• ապահովել անվտանգության կանոնների պահպանումը էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման, գնման և նորոգման ընթացքում,</li> <li>• ստուգել վերանորոգված էլեկտրաքարշը:</li> </ul>
6.	Պատասխանատվության աստիճանը	<p>Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման էլեկտրատեխնիկ-մեխանիկը պատասխանատու է էլեկտրաքարշի արդյունավետ վերանորոգման, սպասարկման, տեխնիկական շահագործման և անվտանգության տեխնիկայի պահպանման համար: Գործում է ինքնուրույն կամ ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ: Բոլոր պարտականությունները կատարում է երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման էլեկտրատեխնիկ-մեխանիկին ներկայացվող պահանջներին համապատասխան:</p>
7.	Աշխատանքների բարդության աստիճանը	Միջին բարդության աշխատանքների կատարում կապված երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործման հետ:
8.	Մասնակցությունը գործընթացներում	Գործընթացներ՝ 1, 2, 3, 4, 5

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
9.	Կրթության պահանջը	Միջին մասնագիտական

**«ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԷԼԵԿՏՐՈՔԱՐՇԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
«ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿ-ՄԵԽԱՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ**

«Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում» մասնագիտության «էլեկտրատեխնիկ-մեխանիկի» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով: Թեստը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուր թվով 20 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 90%-ին:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է սահմանված ժամանակում կատարել հետևյալ գործողությունները՝

- կատարում է էլեկտրաքարշի տեխնիկական գնումն երթից առաջ՝ զննելով էլեկտրաքարշի տեխնիկական վիճակը /էլեկտրական, մեխանիկական, մեքենաների, ավտոարգելակման, ավտոկցման սարքավորումների, անվտանգության սարքերի և այլն/: Անհրաժեշտության դեպքում կատարում է փոքր ծավալի նորոգում տեղում,
- կատարում է պլանով նախատեսված միջին ծավալի էլեկտրաքարշի մեխանիկական մասի ընթացիկ նորոգման աշխատանքների կազմակերպում, հսկում և փորձարկում /անվագույցերի, սայլակների, առանցքատուփերի և այլն/,
- կատարում է պլանով նախատեսված միջին ծավալի էլեկտրաքարշի ավտոարգելակների /օադաբաշխիչների, մեքենավարի ծորակների, օդամղիչի և այլն/ ընթացիկ նորոգման աշխատանքների կազմակերպում, հսկում և փորձարկում,
- կատարում է էլեկտրաքարշի էլեկտրական սարքավորումների միջին ծավալի ընթացիկ նորոգման /արագ գործող անջատիչների, անջատիչների, հոսանքաընդունիչի, կոնտակտորների, ռեվերտորի, ռելեների դիմադրությունների և այլն/ աշխատանքների կազմակերպում, հսկում և փորձարկում,
- կատարում է էլեկտրաքարշի էլեկտրասարքավորումների մեծ ծավալի նորոգման և նախապատրաստման /պահեստավորման/ աշխատանքների կազմակերպում, հսկում և փորձարկում հետագա օգտագործման համար,
- կատարում է էլեկտրաքարշի էլեկտրական մեքենաների միջին և մեծ ծավալի նորոգման /քարշային շարժիչների և օժանդակ մեքենաների/ աշխատանքների կազմակերպում, հսկում և փորձարկում,
- կատարում է արագաչափերի, ռադիոկապի և անվտանգության սարքերի ստուգում երթից առաջ և հետո՝ անհրաժեշտության դեպքում հանձնում նորոգման
- կատարում է էլեկտրաքարշի տեխնիկական վիճակի գնում-ընդունում երթից առաջ և հետո, կատարում է մեքենավարի բոլոր իրահանգները երթի ընթացքում /հետևում է գնացքի ընթացքին, ազդանշաններին, էլեկտրաքարշի սարքավորումների աշխատանքին/:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը

